# Մերձ. Արեւելքի Աստուածաբանական Ճեմարանի հայերէն ձեռագիրները

ԱՆՈՒՇԱՒԱՆ ՎՐԴ. ԴԱՆԻԷԼԵԱՆ

Արտաւազդ Արքեպիսկոպոս Սիւրմէեանի «Ցուցակ Հայերէն Ձեռագրաց Հալէպի եւ Անթիլիասի ու Մասնաւորաց» (1) աշխատանքէն ծանօթ էինք որ Հալէպի «Ալեփփոյ Գոլէճ»ին մէջ կը գտնուէին շուրջ 20 թանկագին ձեռագիրներ, սակայն անոնց այժմու վայրը կը մնար անյայտ: Այս ուղղութեամբ երբ մասնաւոր փնտռտուքներ կատարեցինք, ուրախութեամբ իմացանք Հայկազեան Գոլէճի Հայագիտական Ուսմանց Կեդրոնի Վարիչ՝ Դոկտ. Երուանդ Քասունիէն, որ անոնք կը պահուին Մերձաւոր Արեւելքի Աստուածաբանական Ճեմարանին (N. E. S. T.) *մէջ*:

Ճեմարանի նախագահ՝ Վերապատուելի Յ. Ահարոնեանի բարեհաճ արտօնութեամբ, երբ աչքէ անցուցինք յիշեալ ձեռագիրները, հոն գտանք Սիւրմէեան Սրբազանի նկարագրածներու կարեւոր մէկ մասը, ինչպէս նաեւ հինգ նոր ձեռագիրներ, որոնք ժամանակի ընթացքին գրադարանին սեփականութիւնը դարձած էին:

Մեր այս աշխատանքով կը ներկայացնենք հինգ նոր ձեռագիրներու նկարագրականը, ինչպէս նաեւ Սիւրմէեան Սրբազանի նկարագրած թիւ 32 ձեռագիրը՝ որոշ սրբագրութեամբ եւ յաւելումով: Վերջաւորութեան կու տանք նաեւ ձեռագիրներուն հին եւ նոր թիւերուն բաղդատական տախտակը:

---

1· Ցուցակ Հայերէն Ձեռագրաց Հալէպի եւ Անթիլիասի ու Մասնաւորաց *Հատոր Բ.*, *Հալէպ*, 1936, *էջ* 74–115:

## Ա

## ՇԱՐԱԿԱՆ

Կայսս  ՋժԹ – 1270

Գրիչ՝ *Յակոբոս*։ Ստացող՝ *Յովաննէս*։ Կազմող՝ *Ռստա–կէս*։

Թերթ՝ 236։ Պրակ՝ *Ա–ԻԴ*×12 (*Ա–Բ չիք*, *Գ* 5, *Ժ* 10, *ԺԲ* 9, *ԺԳ* 5, *ԺԵ* 10, *ԺԹ* 11, *Ի* 13, *ԻԱ* 11, *ԻԴ* 10)։ Նիւթ՝ *Թուղթ*։ Մեծութիւն՝ 11·4×8·2։ Գրութիւն՝ *Միասիւն*։ Գիր՝ *Բոլորգիր*։ Տող՝ 18։ Կազմ՝ *Մուգ շագանակագոյն դրոշմազարդ կաշեպատ տախտակ, աստառը՝ կանաչ կտաւ*։

Գլխազարդ՝ 17*ա*, 208*բ*։ Զարդագրութիւն՝ *Հանգուցագիր*։ Լուսանցազարդ՝ *Թռչուն, բոյս*։

Վիճակ՝ *Անբաւարար*։ *Ա. փեղկը ինկած, կազմը քերծուած եւ կռնակը վնասուած, Ա–Բ պրակները թափուած եւ բաւական թերթեր կազմէն անջատուած*։

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1· 1*ա* [Կանոնն Երկրորդ Աւուրն վերափոխման. Տէր Յերկնից] – *Որ անապական մարմնով ծընար*...

2· 17*ա* Կանոնն Բուն Բարեկենդանի. աւրհնութիւն – *Բանն որ ընդ Հաւր*...

51*ա* Շարական Համամայ – *Հայր Երկնաւոր*...

3· 54*բ* Կանոնն Համաւրէն ննջեցելոց – *Աւրհնեալ ես դու Քրիստոս*...

4·66*բ* Կանոնն Ղազարու աւրհնութիւն – *Այսաւր գոլով քո ի Բեթանիա*...

5·67*բ* Կանոնն գալստեան Տեառն յԵրուսաղէմ աւր – *Որ վերաւրհնիս*...

– 104*ա* Շարական խնգարկութեան պատարագին, Բարսղի ասացեալ ոգէլից Վարդապետին. ԳԿ (*ծայրակապ «Մարիամ»*) – *Մըշտատածու խընկոյն լուսոյ*...

6· 110*ա* Կանոնն Աշխարհամատրանն – *Երկըրպագեմք քեզ Քըրիստոս*...

7· 133*ա* Կանոնն գալստեան Հոգոյն Սրբոյ – *Առաքելոյ աղաւնոյ*...

8· 165ա Կանովն վարդավառին աւրհնութիւն – *Որ ի լերինն այլակերպեալ...*

9· 172ա Կանոն Նաւակատեաց խաչին աւր – *Ի վերա վիմի հաստատոյ...*

10· 180ա Կանովն սրբոյ Զատկին· աւրհնութիւն – *Այսաւր յարեաւ ի մեռելոց...*

*(– Միայն մէկ թերթի վրայ գրուած է Զատկի կանոնը – 198ա «Կանոն Սրբոց Հայրապետաց» ի Մանկունքը ունի «Տեսի ես յայնմ յողնախումբ ժողովոյն...» եւ միւս տուները):*

11·208բ [Կանովն համօրէն մարտիրոսաց] – *Ըղձեղ արդար...*

12· 221ա Կանոն աւրհնութեանց մեծի յարութեան – *Երգեսցուք երգ նոր...*

## ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉԻ

122ա *Ո՛սպանանեաց զկս քունն յայսմ տեղոջ· կենդանի է Տէր· եւ տաւել ճանճն զաչս իմ եհան*:

208ա *զՑակոբոս զրէչ յէշեա եղբայր*:

235ա *Ո՛հ բաղում վիշտս ի ճանճէս*:

235բ *Փառք... Աստանաւր յանկ ելեալ աւարտեցաւ մատեանս,* որ է Առաջաբան, *ի լեառն սուրբ* Լուսաւորչին, *ի յանապատս որ կոչի* Կապոսի (2), *ընդ հովանեաւ* Սուրբ Յակոբայ *եւ* Սուրբ Սիովնի, *ի թուին Հայոց ՉԺԹ* (1270), *ի թագաւորութեան* Հեթմոյ *եւ ի հայրապետութեան տեառն Յակովբայ* (3), *եւ յառաջնորդութեան արքեպիսկոպոսին մերոյ տէր* Սարգսի, *մայրաքաղաքիս* [Եզ]նկայի: *Եղեւ կատարումն սորա ձեռամբ մեղապարտ եւ սուտ անուն կրաւնաւորի* Յակովբոսի: *Բայց գրեցաւ սա ի խնդրոյ պատուելի եւ սրբասէր եղբաւր մերոյ* Յովհաննիսի, *որ ստացաւ զսա ի վայելումն անձին իւրոյ եւ յիշատակ իւր եւ ծնաւղաց իւրոց, հաւր իւրոյ սրբայնեալ ծերոյն*

---

2· *«Կայլիփոսի կամ Կապոսի Ս· Յակոբի վանքը կը գտնուի Երզնկայի արեւմըտեան կողմը եւ անկէ երեք չորս ժամ հեռու գետակի մը մերձ, Շողակաթ լերան զառիվերին եւ Գոհանամ լերան ստորոտը... Ս· Յակոբի վանքը ունեցած է զոյգ քարաշէն եւ գեղեցիկ տաճարներ՝ նուիրուած Ս· Յակոբի եւ Ս· Սիոնի» (Դոկտ· Հ· Համազասպ Ոսկեան,* Բարձր Հայքի վանքերը, *Վիեննա,* 1951, *էջ* 66–67):

3· *Յակոբ Ա· Կլայեցի,* 1268–1286 *թթ·*:

Ատոմա *քահանայի* (4) *եւ մաւր իւրոյ ոսկնոջ*(?)։

*Արդ, աղաչեմ զամենեսեան որք հանդիպիք սմա եւ աւկտիք, յիշեսջիք զեղբայրս մեր* Յոհաննէս, *որ ստացաւ զսա յիշատակ, որոյ Տէր Աստուած վայելեալ տացէ։ Եւ ես մեղուցեալ ծառայս Աստուծոյ* Յակոբոս՝ *գրաւղ սորին, որ չեմ յիշել յաղաւթս քո, զհոգեւոր հայրն իմ զ*Մխիթար *քահանայ, ով եղբայր սուրբ,* Յոհաննէս *յիշեա /// վասըռկ(?)դպիր, որ զթուղթս կոկ[եաց բ]ազում աշխատութեամբ։ Յիշեա եւ զկազմող սորին զ*Ռըստակէս *դպիր, որ ծաղկեաց եւ կազմեաց, եւ դուք լիջիք յիշել առաջի Քրիստոսի, եւ նմա փառք յաւիտեան։*

***Բ.***

## *ԺՈՂՈՎԱԾՈՅ*

Անթափ — ՌՃԺ – 1669

Գրիչ՝ *Պաղտասար Երէց*։

Թերթ՝ 134. *դատարկ*՝ 72*բ*։ Պրակ՝ *Ա–Ջ*×12 (*Ա* 13, *Ջ* 11) + *Ա–Ե*×12 (*Ա* 11, *Ե* 11)+1×4։ Նիւթ՝ *Թուղթ*։ Մեծութիւն՝ 13·8×10։

---

4. *Ծերունի Ատոմ քահանայի վերագրուած այս մակդիրը՝* Սրբայանեալ, *զուգորդութիւն մը կը ստեղծէ մեր մտքին մէջ Հ. Ղեւոնդ Ալիշանի յիշած Ատոմին հետ, որ թաթարական արշաւանքներու հետեւանքով Միջագետքէն ընտանեօք փոխադրուած է Լամբրոն, իր հօրեղբօր՝ Կարապետ քահանային մօտ։ Վերջինս Աւետարան մը գրել տուած է Յակոբոս կրօնաւորի մը, իրեն եւ իր եղբօրորդւոյն համար։ Կը մէջբերենք յիշատակարանէն մաս մը. «Յամի վեցհարիւրերորդի ութսներորդի երկրորդի* (1233)… *գրեցաւ Աւետարանս ձեռամբ Յակոբայ սուտանուն կրօնաւորի… յիշեսջիք ի Քրիստոս զստացող գրոցս զԿարապետ աստուածաբնակ քահանայ, զի ստացաւ զսա յարդար վաստակոց իւրոց, ի յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ի վայելումն եւ ի ժառանգութիւն ՍՐԲԱՍՆՈՒՆԴ պատանւոյն Ատոմայ եղբօրորդւոյ իւրոյ»* (*Ալիշան*, Հայապատում, *Վենետիկ*, 1901, *էջ* 475)։

*Հետաքրքրական կերպով վերոյիշեալ Աւետարանի գրիչը եւ մեր Շարակնոցի գրիչը նոյն անունը կը կրեն՝ Յակոբոս կրօնաւոր, թէեւ մին Լամբրոնի մէջ գրած է ձեռագիրը, իսկ միւսը՝ Կապոսի վանքը։ Սակայն, ինչ որ մեր ուշադրութիւնը կը գրաւէ, այն է որ* 1233 *թուին գրուած այս ձեռագիր Աւետարանին մէջ կը հանդիպինք* պատանի սրբասնունդ *Ատոմի մը, իսկ* 1270 *թուին գրուած մեր ձեռագիր Շարակնոցին մէջ կը գտնենք* ծերունի սրբայանեալ *Ատոմ քահանայ մը։*

*Կարելի՞ է արդեօք հետեւցնել, որ երկու ձեռագիրներու մէջ յիշուած պատանի եւ ծերունի սրբասնեալ Ատոմները նոյն անձն են, թէ ոչ եղածը պարզ զուգադիպութիւն մըն է։*

Գրութիւն՝ *Միասին*: Գիր՝ *Նօտրգիր*: Տող՝ 17/19: Կազմ՝ *բաց սըրճագոյն կաշեպատ խաւաքարտ*: Պահպանակ՝ 1 *թերթ վերջը*:

Գլխազարդ՝ 73ա: Զարդագրութիւն՝ *Թռչնագիր* (*սակաւ*): Լուսանցազարդ՝ *Թռչուն* (*սակաւ*):

Վիճակ՝ *Բաւարար: Կազմը քերծուած, սկիզբը եւ վերջը կարգ մը թերթեր սկսած են անջատուիլ կազմէն*:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. 1ա–67ա [Հարցմունք Աթանասի եւ Պատասխանիք Կիւրղի] – 1ա–3բ [Ցանկ] *Ա. Վասն ընդէ՞ր ոք ի մեռելոց ոչ եկն յաշխարհն... ԾԻԴ. Վասն հարկանելոյ զաղքատն կամ առցէ զինչ*:

4ա–67ա Երանելոյն Աթանասի Արքեպիսկոպոսի Աղեկսանդրացոյ հարց*մունք* վայել*ուչք* եւ Պատասխանի Կիւրղի Երուսաղիմայ Հայրապետի: Օգնեա Հոգիդ – *Հետեւումն համարիմ ընդ Աստուծոյ... վասն ողոց մարդկան բան ինչ ուսուցանել մեզ, վասն այսմիկ հարցանեմ ընդ սրբութիւնդ քո ով երանելի հայր: Պտ. Իսկ ոգի մարդոյ գոյացութիւն է անիմանալի, ի նմանութիւն հրեշտակաց... ընդ հրբէային տանջեսցիս, որ զՔրիստոս յապտակեցին եւ Քրիստոսի մերոյ փառք... ամէն*:

2. 76ա–71բ Կանոն եւ պատուիրան յամենայն մեղացն զոր գործել տայ չարն սատանա – *Եղբայրասպանն Ա քառանից տայ, Ե տարի պղլուխն չածիլէ... եւ թէ երկուքն այլ են պատճառ նայ երկուքն ալ պահեն եւ ծառայ մի գնեն եւ ազատեն*:

3. 73ա–124ա Ի հարանց վարուց

*ա*. 73ա–109բ Ի հարանց վարուց – *Ա. Մեծն Անտոն ասաց երեք խաւսք, զոր թէ առնէ ոք ապրի. չառնել ինչ առանց վկայութեան գըրոց... ԾԻԸ. Սուրբն Պափնուտիոս ցանկացաւ շրջել ընդ անապատն տեսանել զծառայս Տեառն...*

*բ*. 109բ–22բ Ի վարուց ճգնաւորաց այլ բանից Ասորոց – *Ա. Երբեմն հայրն Անտոն աղօթէր ի խրճթին իւրում, եւ եղեւ առ նա ձայն... Խ. Ասացաւ երբեմն ի ժողովս կրօնաւորացն, թէ Գ են մեծամեծք գործք...*

*գ*. 122ա–3ա Երանելոյն Մակարա բանք խրատու ոգէշահ – *Որ ոչ քեցեսցի յամենայն հիւթից յօխտենիս, ոչ կարէ ժառանգել զստոյգ կեանսն...*

*դ*. 123ա–4ա Հարցումն խրատուց միանձանց կրաւնաւորաց – *Բարիո՞ք է ստանալ երկուս հանդերձս: Պտ. Ստացիր երկուս հանդերձս եւ մի ստանար չարախօսութիւն...*

4. 124ա–բ Գրիգորի Նարեկացոյ աղաւթք վասն ջերման – *Արդ*

այսքանեաց անբաւից հրաշից հանդերձիչ Հայր ամենաստեղծ… ըղհառաչումն ձայնի հեծութեան սրտից մերոց, եւ քեզ փառք յաւիտենանս. ամէն:

5. 124բ–34 [Առակf]

ա. 124բ–5ա Վարդապետ մի գնալն իւր աշակերտօքն, ի ճանապարհին մէկ խան մի կայր իջաւ ի հոն…

բ. 125ա–բ Քահանայ ումն քարոզէր ժողովուրդն յաղուհացն գալ ի խոստովանութիւն…

գ. 125բ–6բ Ասի ի պատմութեանց թէ թագաւոր մի որդի ծընաւ, ապա աչք եւ ականջ չկայր…

դ. 126բ–7ա Ասի թէ այր ումն էր յոյժ ծոյլ եւ պղերգ…

ե. 127ա–բ Ասի թէ հրէայ մի ի ճանապարհն կու գնայր եւ մոլորեցաւ…

զ. 127բ Ասեն թէ խեցգետինն խրատէր զձագս իւր ըղորդ ընթանալ զճանապարհն…

է. 127բ–8բ Ասի յԱռակաց թէ այր մի գնաց առ դատաւորն քաղաքին, խոստացաւ նմա թէ քեզի բըղուղ մի իւղ տամ…

ը. 128բ–9ա Ասի թէ աղքատ էրէց մի մաւտ մսագործն գնաց…

թ. 129ա–30բ Ասի թէ երկու արք միմեանց յոյժ բարեկամք էին գնացեալ ի վաճառականութիւն…

ժ. 130բ Ասի թէ միակեց մի հետ սատանայի ուխտ եդիր… զինքն մեծութեան հասուցանէ, եւ սատանայ… (3 տող միայն, Շար. թափուած)

ժա 131ա–բ …[Եր]իտասարդն ուղի անկեալ գնաց եւ գտեալ զայրն, ասաց. կամ առ զգլին քո կէս խնձորին եւ կամ հալալ արա…

(Էջերու ետառաջութեան պատճառաւ պատմութեանս սկիզբը կը գտնուի 132բ.– Երիտասարդ մի ուխտ էր եդեալ զի հարամ չուտէր…)

ժբ. 131բ Ի դիմաց ծոյլ առաջնորդաց… – Այսպէս գրէ, թէ եղեւ ժողով եպիսկոպոսաց եւ վարդապետաց…

ժգ. 132ա–բ Տէր միանակեց մի թերահաւատ լինէր եւ ասէր, թէ հաց եւ գինի ճաշակել չէ շահ մեռելոյ կամ կենդանոյ…

ժդ. 133ա–4ա Էջ թեւաւոր եւ հաւ սմպակաւոր…

ժե. 134ա Այր մի գնաց մաւտ ի քահանայի մի խոստովանիլ… Ես քեզի ինչ կարաւտէի:

## ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՁԻ

71բ գրեցաւ սակաւ բանքս որ է յառաջին հարցմունք սրբոյն Աթանասի եւ Կիւրղի, եւ սակաւ կանոնք, եւ սակաւ Հարանց Վարք ի



ՁԵՌԱԳԻՐ Ա․, ՇԱՐԱԿԱՆ



ՁԵՌԱԳԻՐ Բ․, ԺՈՂՈՎԱԾՈՅ

*Թվ. հայոց ՌՃԺԸ* (1669) *ամին ԻԹ ի կաթողիկոսութեան Կիլիկիոյ Տէր* խաչատուրին *զոր այժմ յամի կրկին նստաւ յաթոռն, եւ յայժմ ամի եղեւ մահ տարաժամ ի յԱնթափ, ի Քիլիս եւ ի Հալապ. սկսաւ Զատկին մինչեւ ի փոխման Աստուածածնին, զոր Տէր Աստուած ողորմեսցի ննջեցելոցն*:

*Ձեռամբ սուտ անուն* Պաղտասար *երիցու, զոր անուամբ միայն եմ քահանայ եւ գործով ոչ. ի քաղաքն յ*Անթափ, *ընդ հովանեաւ* Սուրբ Աստուածածին *յեկեղեցուն: Արդ, աղաչեմ զձեզ, ով դասք քահանայից եւ որք հանդիպիք ի սմա կարդալով կամ տեսանելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զմեղապարտ գծողս մէկ հայր մեղայիւ, եւ որք յիշէք յիշեալ լինիք ի Քրիստոսէ յԱստուծոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս յաւիտենից. ամէն*:

124*ա Տէր Աստուած ողորմեա ստացողի եւ գծողի գրոյս Պաղտասար դպրի եւ ծնաւղաց իմոց ամէն*:

Գ.

### *ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ. ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ ԴԱՒԹԻ*

*ԺԷ Դար*

Գրիչ՝ *Կարապետ Իբերցի*:

Թերթ՝ 317. *պատարկ*՝ 1–2*ա*, 312*բ*–6*բ*: *Պրակ*՝ 1–26×12 (1–10, 17–14, 19–18, 26–10): Նիւթ՝ *Թուղթ*: Մեծութիւն՝ 19·8×14·3: Գրչութիւն՝ *Երկսիւն*: Գիր՝ *Նոտրգիր*: Տող՝ 30: Կազմ՝ *Դրոշմազարդ, մուգ շագանակագոյն կաշեպատ տախտակ*:

Վիճակ՝ *Բաւարար: Առաջին պրակին առաջին թերթը եւ վերջին պրակին վերջին թերթը փակցուած կողքին: 2բ–3բ, 224ա–7բ եւ* 302*ա*–3*բ հետագային վերստին ընդօրինակուած*:

Ծանօթ՝ *Նկարագրուած Արտաւազդ Արք. Սիւրմէեանի կողմէ, Հտ. Բ. Թիւ* 32:

### *ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ*

– 2*ա*$^1$–3*բ*$^2$ Ցանկ է առաջին կանոնին եւ նախերգան – *Նախ մի է Աստուած միջնորդն, զանձ իմաստութեան... եւթն եւ տասներորդ սաղմոս վերջին՝ Վասն Կանոնագլխին...*

*Ա.* 4*ա*$^1$–7*բ*$^1$ Նորին բազմերջանիկ եւ երանաշնորհ սուրբ հօրըն եւ անյաղթ հռետորի եւ լուսաւոր վարդապետի, խարազանազգեաց ճգնաւորի, նորոգ լուսաւորչին Հայոց՝ Գրիգորի եռամեծի լուծ–

մունք դժուարիմաց բանից եւ քաղուածոյ Սաղմոսացն Դաւթի, ի սըր-բոյն վարդանա մեկնութենէ յոյժ պիտանի, շարադրութեամբ եւ գե-ղեցիկ պիտառութիւն: *Հոգի Սուրբ… – Մի է Աստուած, նախ ընդ-դէմ բաղում աստուածոց, երկրորդ մի է անձամբ Հայր…*

*բ*· 7բ$^{2}$–35ա$^{2}$ Սաղմոս ի Դաւիթ· Երանեալ է այր որ ոչ գնաց ի խորհուրդս – *Ի վերայ այսմ բանի Զ իրս հարցանելի է…*

– 35ա$^{2}$–6ա$^{2}$ Այս ինչ է ցանկ կանոնիս երկրորդ, ութ եւ տաս-ներորդ սաղմոսիս – *Զորս խորհուրդ կանոնիս… երեսն եւ հինգերորդ սաղմոս՝ Անօրէն իշխանն…*

*Բ*· 36բ$^{1}$–61բ$^{1}$ Ի կատարած Սաղմոս ի Դաւիթ – *Երկրորդ կա-նոնս՝ ութեւտասներորդ սաղմոս պատճառ ունի զերեք օրէնս…*

– 61բ$^{1}$–2բ$^{2}$ Ցանգ Երրորդ կանոնիս այս է – *Երեսուն եւ վեցերորդ սաղմոսս նախ ի խորհուրդ երրորդ աւուր արարչութեան… Ցխուն եւ չորրորդ· Հրց· Զի՞նչ է աղօթք եւ խնդրուածք…*

*Գ*· 63ա$^{1}$–103ա$^{1}$ Սաղմոս ի Դաւիթ· *Երեսուն եւ վեց սաղմոս պատճառ ունի զնախանձելի ծերութեան Դաւթի…*

*բ*· 67ա$^{2}$–8բ$^{1}$ Նորին վասն մահու քարոզ ի բանն· Ահա չափով եդիր զաւուրս իմ – *Վտանգեալ երբեմն Դաւիթ ի վշտալից կենցաղոյս…*

*գ*· 69բ$^{1}$–72ա$^{2}$ Նորին քարոզ վասն վարդապետաց, ի բանն· Աւետարանեցից զարդարութիւն… – *Տէրն մեր Յի-սուս Քրիստոս յառաջ քան զմարդեղութիւն իւր…*

*դ*· 72ա$^{2}$–4ա$^{2}$ Նորին քարոզ վասն ողորմութեան, ի բանն· Երանի որ խորհի զաղքատն – *Բարի գործք Գ են տե-սակաւ…*

*ե*· 83բ$^{2}$–6բ$^{2}$ Նորին· քարոզ վասն Համբարձման, ի բան· Համբարձաւ Աստուած օրհնութեամբ – *Քնար եւ երգարան Հոգոյն Սրբոյ՝ մեծն ի մարգարէս…*

*զ*· 94ա$^{1}$–5բ$^{1}$ Նորին քարոզ վասն ապաշխարութեան, ի բանն· Առաւել լուա – *Բանս այս վասն ապաշխարութեան եւ թողութեան մեղաց է…*

*է*· 100բ$^{2}$–1բ$^{2}$ [Քարոզ աղօթից] Ես առ Աստուած կար-դացի – *Վասն բազում պատճառի այսքան ժամանակս աղօ-թելի է…*

– 103ա$^{1}$–4ա$^{2}$ Ցանկ է չորրորդ կանոնին Սաղմոսիս – *Ցխուն եւ հինգերորդ սաղմոս ի խորհուրդ չորրորդ դարուն… Եւթանասուն եւ մի սաղմոս՝ յանցեալ վասն կանոնաց…*

*Դ*· 104ա$^{2}$–42բ$^{2}$ Ի կատարած վասն ժողովրդեանն, որ ի սըր-բոցն հեռացեալ են ի ժամանակին, զի կալան զնա այլազգիք ի գէթ

արձանագիր· Սաղմոս ի Դաւիթ – *Յիսուն եւ հինգ սաղմոսս պատճառ ունի զժողովուրդն ի սրբութեանցն հեռացեալ...*

բ· 106բ$^{2}$–8ա$^{1}$ Նորին քարոզ վասն գիշերապաշտման, ի բանն· Զարթիք փառք իմ... – *Վեց է տեսութիւն բանիս, նախ ի դէմս Դաւթի...*

գ· 121բ$^{2}$–5ա$^{2}$ Նորին քարոզ ի բանն որ ասէ· Անցաք մեք ընդ հուր... – *Զաստուածային անեղ բնութիւն միայն ասաց բարի գոլ...*

– 142բ$^{2}$–3բ$^{2}$ Ցանգ է հինգերորդ Կանոնիս – *Եւթանասունմերորդ եւ երկրորդ սաղմոս թիւ եւթանասնիցն... Ութսուն եւ ութերորդ սաղմոս՝ Յաւիտեան ազգէ յազգ...*

Ե· 144ա$^{1}$–83բ$^{1}$ Սաղմոս Յասափայ – *Եւթանասուն եւ երկրորդ սաղմոս պատճառ ունի զչերոյն դէմքն...*

բ· 145ա$^{2}$–6ա$^{2}$ Նորին քարոզ ի բանն սաղմոսին· Յանկարծակի սատակեցան պակասեցան – *Երազ է կեանքս այս...*

գ· 149ա$^{1}$–52բ$^{2}$ Նորին քարոզ վասն տանջանաց եւ խրատուց եւ վասն մարտիրոսաց եւ հաղորդի եւս, ի բանն սաղմոսի ·Զայս խոնարհ առնէ – *Կրկին գործք մարդկան բարի եւ չար...*

դ· 160ա$^{2}$–1բ$^{2}$ Նորին քարոզ վասն հատուցման չարաց եւ բարեաց, ի բանն սաղմոսին որ ասէ· Հատոյ դրացեաց մերոց – *Գործն Աստուծոյ կրկին է իմանալ, նախ զի ստեղծանէ...*

ե· 167ա$^{1}$–9բ$^{1}$ Նորին քարոզ վասն դատաստանի, ի բանն Աւետարանչին· Դատ արարէք որբոյն եւ այրոյն – *Սովորութիւն է Աստուծոյ ի ձեռն յառաջնոցն զյետինս կառավարել...*

զ· 171ա$^{1}$–բ$^{2}$ Նորին քարոզ վասն սեղան օրհնելոյ ի բան սաղմոսին· Սեղան քո Տէր զօրութեան – *Սեղան կոչի Տէր մեր Յիսուս Քրիստոս վասն բազում պատճառի...*

– 183բ$^{1}$–4բ$^{1}$ Ցանգ է վեցերորդ Կանոնիս – *Ութսուն եւ ինն սաղմոս բաղդատութիւն Դ խորհրդոցն... Հարիւր եւ հինգերորդ սաղմոս՝ Քաղցրութիւն Աստուծոյ...*

Զ· 184բ$^{2}$–228ա$^{2}$ Աղօթք ի Մովսէս՝ յայրն Աստուծոյ· վեցերորդ Կանոն է այս Ախտարակս, որ զանազան կիրս մեր եւ փոփոխմունս ցուցանեմք – *Կարգ կանոնին ասաց բարի է Իսրայէլի Աստուած...*

բ· 221ա$^{1}$–3ա$^{1}$ Նորին քարոզ վասն մահու, ի բանն սաղմոսին որ ասէ· Մարդոյ որպէս խոտոյ են աւուրք – *Մահկանացու կեանք մարդոյ Գ յատկութիւն ունի յաշխարհի...*

զ․ 219ա2–22ա2 Նորին քարոզ վասն Յարութեան, ի բան մարգարէին որ ասէ․ Առաքեա զոգի քո եւ ստանաս – *Ի վերայ այսմ բանի Զ ինչ հարցանելի է, նախ թէ ընդէր աստ զյարութիւն յիշէ...*

– 228ա2–9ա1 Ցանկ է Եւթններորդ Կանոնիս – *Հարիւր եւ վեցերորդ սաղմոս ունի գլխորհուրդ եւթներորդ աւուր շաբաթու... Հարիւր եւ ԺԲ՝ յամբիծքն...*

է․ 229ա2–56ա2 Ալէլուիա Օրհնութիւն – *Եւթներորդ կանոնս, որ է Խոստովան, աւուրս արարչութեան հայի յեւթներորդ օր շաբաթուն...*

– 256ա2–8ա1 Ցանկ է ութերորդ Կանոնիս – *Հարիւր տասնեւիններորդ սաղմոս վասն արարչութեան կրկին... Հարիւր յիսուներորդ սաղմոս թիւն ազատութեան...*

Ը․ 258ա2–311բ2 Աւրհնութիւն աստիճանաց․ Յաղագս Ութերորդ Կանոնին, որ է ՃԺԹ Սաղմոս – *Պատճառ ունի զգերոյն ազատելն... դարձեալ բովանդակն ՃԾ սաղմոս ՄՆԶ տուն է, յորժամ Տէր Հովուեսցեն Ը տուն լինի․ այսքան առ այս։*

բ․ 272բ2–5ա1 Քարոզ ի դէմս եկեղեցւոյ եւ սուրբ Կուսին, ի բան սաղմոսին որ ասէ․ Արի Տէր ի հանգիստ քո – *Զի՞նչ է հանգիստն որ ասէ։ Պխ․ Գիտել պարտ է, զի հանգչիլ ասի նմա որ վաստակի...*

գ․ 275ա1–բ2 Քարոզ քահանայից ի բանն․ Քահանայք քո զգեցցին զարդարութիւն։ Մեկնութիւն Վանական Վարդապետի – *Քահանայն հայր է աշխարհի, այսինքն փոխանորդ Քրիստոսի...*

դ․ 275բ2–7բ2 Քարոզ միաբանից, ի բանն որ ասէ․ Զի բարի է··· – *է բարի որ չէ վայելուչ...*

ե․ 277բ2–80ա2 Նորին քարոզ վասն օծելոյ, ի բանն․ Որպէս իւղ զի իջանէ··· – *Աւրինակ տա զայս իմանալ ի միասին բնակեալ եղբարց...*

զ․ 280բ2–1բ2 Քարոզ Կիրակմտի, ի բանն որ ասէ․ Ի գիշերի համբարձէք զձեռս – *Այսինքն զերապաշտօն առնել եւ համբառնալ զձեռս...*

է․ 291ա1–2բ1 Քարոզ վասն աղօթից ի բանն․ Ուղիղ եղիցին աղօթք – *Մարգարէն պաղատի, ճանապարհաւ աղօթիցն ուղղիլ առ Աստուած...*

### ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽԱԳԱՂԱՓԱՐԻ

311բ2 *Ընդ որոց վերջինս բանասիրաց եւ տրուպ խնդրողաց բանին, պիտակ անուն կոչեցեալ Գրիգոր մեղսաներկ անձամբ եւ տխեղծ*

մատամբ վերստին հաւաքեցի զքաղուածոյս Մեկնութիւն Սաղմոսացըն Դաւթի, ի նեղ եւ ի ստորասուղեալ ժամանակիս, յորում բռնակալըն Թամուր Թուլտուութեամբ վերին խնամոցն տիրեալ էր բազում աշխարհի եւ աւերեալ կործանեցաւ այսմ ամի ՊԺԳ (1364) Թուի: Եւ պատճառ շարժողութեան վերստին քաղուածոյս, նախ ի մեծին Վարդանա համառօտ եւ խորին տեսութիւն, որ անյայտ մնայր միշտ, հոգացայ ընդարձակ եւ յայտնի ցուցանել...

Արդ, եթէ գտցի ինչ ի սմա արժանի տեսութեան ձեր Տեառն շնորհք եւ վարժապետացն նախնի, եւ պակասն տկարութեան մերում ներեսցի: Այլ եւ վարդապետին իմոյ Յոհաննու Որոտնեցոյ յիշատակ բարի ի Տէր արձանասցի... Առ հասարակ տէրն ողորմեսցի յաւուրն ահեղի եւ նմա փառք յաւիտեանս. ամէն:

## ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉԻ

144ա1 Աւգնեա Սուրբ Հոգի անմար եւ մեղաւոր նօտարիս:
312ա2 Նա եւ զիս զեղկելի,
Բազում չարեաց հոլիս ի լի,
Մինչ զի ներկեալ եմ ի մարմնի,
Իբերցի Կարապետս որ գրեցի,
Յոյժ փափագմամբ եւ ծարաւի,
Այս քաղցրահամ բուրաստանի,
Մինչ զի գրոյն փոյթ ոչ արի,
Ոչ քարտիզի լաւագունի,
Զի չէր հասու ժամանակի

Փառք քեզ եւ երկրպագութիւն ամենասուրբ Երրորդութիւն, որ ետուր ինձ տկարիս զօրութիւն, յաւարտ ելանել սուրբ կտակիս: Աւրհնեալ է Աստուած, գովեալ է Աստուած, զի որպէս դիւրին է նավավարին ի ցամաք ելանել, նոյնպէս դիւրին է եւ ցնծութիւն գրագրին ի կատարածն հասանել, եւ Քրիստոսի մարդասիրին փառք եւ գոհութիւն յաւիտեանս. ամէն:

## ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ (5)

143բ2 Յիշատակ է գիրքս Անթափցի Պօղոս Վարդապետին, ի ձեռն նորին աշակերտի Խէպլիցիս Սիմէոն Վարդապետին, Թվին ՌՃԽԶ (1697): Նման՝ 312ա2 (Վրան թերթիկ մը փակցուած եւ գրուած է. «Աբրահամ Ծառայ Յիսուսի»):

[Կնքադրոշմ՝ 312ա2 «Քրիստոսի ծառայ Տէր Մարուքէ [Ռ°]-ՂԳ»:

5. Սեւրմէեան Սրբազան իր Թիւ 32 Ձեռագրին մէջ «Յետագայի» այս յիշատակարանը նկատած է Գրչի Յիշատակարան, զանց ընելով 312ա2 Մայր Գրչի Յիշատակարանը:



ՁԵՌԱԳԻՐ Գ., ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ



ՁԵՌԱԳԻՐ Դ., ԷՓԻՄԵՐՏԵՍ

## Դ.

### *ԷՓԻՄԷՐՏԷՍ ԵՒ ՏՈՒՄԱՐ* (6)

*ԱՆԴԱՊ* *ՌՄՀԹ* 1830

Գրիչ՝ *Մուրատ Պօղոսեան*:

Թերթ՝ 85. *դատարկ*՝ 1ա–2բ, 3բ–4բ, 8բ, 21ա–37բ, 54ա–62ա, 65ա, 68ա, 70բ–1ա, 74ա, 79ա, 81ա–5բ: Պրակ՝ 1–17×4 (Դ 5, *Ժա–Ժբ* 8, *Ժդ–Ժե* 8): Նիւթ՝ *Թուղթ*: Մեծութիւն՝ 21×15: Գրութիւն՝ *Միասիւն*: Գիր՝ *Շեղագիր*: Տող՝ 24: Կազմ՝ *Թղթակազմ*:

Վիճակ՝ *բաւարար: Կազմը պատռուած. կարգ մը դատարկ թերթերու վրայ անճոռնի գծագրութիւններ*:

### *ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ*

3ա Էփիմէրտէս եւ Տումար, օրինակարգեալ ի Մուրատ դպրէ Պօղոսեան Աբրահ[ամ]ի որդի, ի «բօշանս Հայազեան մանկանց. յամի 1830, ի Դեկտեմբերի 15, յԱնդապ:

*Ա.ա* 5ա–6ա Տարեկան ընթացք արեգական – *Տարեկան ընթացք արեգական բստ այսմ է, զի 365 աւուրք եւ 5 ժամու եւ 48 րոպէիւ...*

*բ.* 6ա Աստիճանական շարժումն արեգական – *Արդ, արեգակն յիւրաքանչիւր աստիճան...*

*գ.* 7բ–8ա Աստիճանական ընթացք լուսնի – *Լուսին կատարէ զկամարն զոդիակոսի 27 օր...*

*Բ.* 9ա–20ա Իլմի նիւճմ մալիւմի ճիւղի թարեգտէ – *Իլմի նիւճմէ խլադըմ օլանը պիլտիրիր... (Հայատառ Թրքերէն)*:

*Գ.ա.* 38ա–53բ Եթէ կամիցիս գիտել թէ արեգակն յորում կենդանակերպի է կամ յորում գօտւոջ է – *Կալ յայծեղջերէն եւ յայբ գըրէն...*

*բ.* 38ա–բ Վասն խաւարման արեգական եւ լուսնի – *Խաւարի՝ յորժամ արեգակն եւ լուսինն տես ի նմին կենդանակերպի է...*

*գ.* 38բ Բաժանմունք կենդանակերպից ի վերայ տեղեաց – *Խոյն՝ պարսից գլխոյն...*

*դ.* 38բ–9ա Ցաղագս մոլորակաց – *Առաջին մոլորակ կամ գօտին որ լուսինն է, ստորին մոլորակ մօտաւոր մեզ...*

*ե.* 39բ Ցաղագս ամենայն մոլորակաց – *Երեւակն առաջին դարոյն է տէր...*

---

6. *Էփիմէրտէն = Օդերեւութաբանական ուղեցոյց*

դ. 39բ–40ա Ցաղագս բարձրանալոյ մոլորակաց – *Բարձրանալն եւ խոնարհիլն մոլորակաց այս է...*

է. 40ա Ցաղագս պարբերական ընթացից մոլորակաց – *Երեւակըն պատէ զգունդն ի միջոցի Լ ամի...*

ը. 40բ Ցաղագս տեւողութեան մոլորակաց յաստիճանն – *Երեւակն տեւէ յիւրաքանչիւր աստիճանի Լ օր...*

թ. 40բ Ցաղագս գործողութեան մոլորակաց – *Երեւակն է էգ...*

ժ. 40բ Ցաղագս որք ընդ իշխանութեամբ մոլորակաց ծնանին – *Ծնեալն ընդ իշխանութեամբ Երեւակին յանկարծամահ մեռանի...*

ժա. 40բ–1ա *Ի Թուականիս հայոց ՌԼՁ Երեւակն էր ի ԺԹ աստիճանի...*

ժբ. 41բ–2բ Ցաղագս գունոց եւ շարժմանց եւ ազդեցութեանց մոլորակաց – *Հրատն թէ իցէ կարմրագոյն, յայնժամ ընթանայ ի Հիւսիս...*

ժգ. 42բ–3բ Գիտելիք ի վերայ ամսոց – *Ցարաց ամսոյ քան օրէն յառաջ տես թէ որպիսի եղանակաւ վարին աւուրք...*

ժդ. 43բ–4ա Եթէ կամիցիս գիտել զաղութիւն հացի կամ զլխութիւն, քեզ այս լից կանոն – *Ընկալ քեզ չափ մի ցորեան...*

ժե. 44ա–5ա Գուշակութիւնք – *Ի Մարտի ԻԱ օրն արեգակն ի խոյն մտանէ...*

ժզ. 45ա–6ա Ցաղագս որոտմանց ի վերայ լուսնի, յինչ կենդանատիպ լինիլն գուշակութիւն – *Եթէ լուսինն ի Խոյն լինի եւ յայն օր լինիցի որոտումն...*

ժէ. 46ա–8ա Վասն աղեղան ի վերայ լուսնի, յորժամ իցէ ի կենդանատիպսն. գուշակութիւն – *Յորժամ լուսինն իցէ ի խոյն, կենդանատիպն եւ աղեղն իջանիցէ...*

ժը. 48ա–բ Ցաղագս բակին լուսնի – *Մինչ լուսինն իցէ ի խոյն եւ բակ առնուցու...*

ժթ. 48բ–9բ Ցաղագս խաւարման լուսնի – *Յորժամ լուսին իցէ ի խոյն՝ խաւարեսցի...*

ի. 49բ–51բ Ցաղագս նշանաց մոլորակացն – *Յորժամ երեւակն մտանիցէ ի խոյն, լինի արիւնհեղութիւն...*

իա. 51բ–2բ Կանոն յաղագս գիտելոյ թէ լուսինն յո՞ր կենդանակերպ – *Քեզ օրինակ կալ, յամի Տեառն 1825, ի Հոկտեմբեր 4...*

իբ. 52բ [Կենդանակերպք] 1. *Խոյ*... 12 *Ձուկն*։

իգ. 52բ–3ա Եթէ կամիցիս գիտել թէ արեգակն յոր գօտին է կամ մոլորակ է – *Կալ ի գարնանային հասարակածէն...*

իդ. 53ա–բ Եթէ կամիցիս գիտել թէ լուսինն յորում կենդանատեսակի է, ի ձեռն հաշուի, արա այսպէս – *Զաւուրս լուսնի ԲԺ պատկեռ...*

Դ. 63ա–80բ Զօհալըն ճէտվէլի իչին մալիմ – *Պու ճէթվէլ զօհալըն տէվլիր ճէթվէլլիտիր... խատէտիկլին սէհէթ ներտէ օլտուղու մալիւմ օլուր (հայատառ թրք.)*:

## Ե.

## ՔԱՐՈԶԳԻՐՔ

ԺԹ Դար

Թերթ՝ 76. *զատարկ*՝ 73ա–6բ: Պրակ՝ 1–13×4 (*Ա* 8, *Բ* 1, *Գ* 8, *Դ* 7, *Թ* 6, *ԺԲ* 10, *ԺԳ* 12): Նիւթ՝ *Թուղթ*: Մեծութիւն՝ 33·5×25: Գըրութիւն՝ *Մխաւին*: Գիր՝ *Նօտրգիր*: Տող՝ 45/6: Կազմ՝ *Շագանակագոյն դրոշմազարդ կաշեկազմ խաւաքարտ*:

Վիճակ՝ *Անբաւարար: Կաշին կազմը անջատուած, կարգ մը թերթեր կազմէն բաժնուած, խոնաւութենէ գրագաշտը գունափոխուած եւ ծայրերը պատռուած*:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

*ա*. 1ա–2ա Քարոզ առաջին ի տարեմուտ. գոհանալ զԱստուծոյ. Օրհնեա անձն իմ զՏէր, ի Սաղ. ՃԲ – *Երկու տուն ի սաղմոսացն Դաւթի համար տամ ձեզ այսօր...*

*բ*. 2ա–3ա Քարոզ երկրորդ, Կիւրակէի պահոց ծննդեան. ընթացք Քրիստոնէի. Ցամենայնի կամիմ բարւոք... – *Աստուածաբանք զհաւատացեալս, որք են ի վերայ երկրի, ճանապարհորդ անուանեն...*

*գ*. 3ա Քարոզ երկրորդ. Ծնունդ Տեառն... եւ եղեւ ի հասանել լնցա... – *Իբրեւ մերձեցաւ կուսական ծնունդ հանդերձեալ Մեսիային...*

*դ*. 3բ Քարոզ երրորդ. Ծնունդ... – *Ել եւ Յովսէփ ի Նազարէթէ, ունելով ընդ իւր զՄարիամ...*

*ե*. 3բ–4ա Քարոզ չորրորդ, ի նմին աւուրն... Դա է որդի իմ... – *Տնօրինեցաւ Բանն Աստուած յարգանդի կուսին ի Նազարէթ...*

*զ*. 4ա–5ա Քարոզ հինգերորդ... Փառք ի բարձունս... – *Ի գերահրաշ հանդիսի կուսական ծննդեան...*

*է*. 5ա–6ա Քարոզ վեցերորդ... Զի՞նչ տաց տրիտուր Տեառն... – *Եթէ նկարիչ ոք կամիցի զթշուառութիւն մարդկային բնութեան ցուցանել...*

*ը*: 6ա–7ա Քարոզ եօթներորդ... Ամենայն մարդ զանոյշ գինին... – *Յայսօրեայ ընթերցուած սուրբ Աւետարանին պատմէ...*

*Թ.* 7ա–8ա Քարոզ ութերորդ... Օրինակ լիջիր հաւատացելոց... – *Արուեստ է հովուութիւն անբան ոչխարաց...*

*Ժ.* 8ա–9ա Քարոզ իններորդ... Փութասջիր զանձն քո ընտիր կացուցանել... – *Ոչ ոք ի մարդկանէ կամի յոռի ինչ ունել...*

*ԺԱ.* 9ա–բ Տասներորդ քարոզ... Ցնծասցէ անձն իմ ի Տէր... – *Յորժամ Եսայի մարգարէ նկարագրէր զզարմ Իսրայէլացւոց... զի ըստ աստուածաբանից...* (*չար. Թափուած*)։

(*Կը պակսին 11–րդ եւ 12–րդ քարոզները*)։

*ԺԲ.* 10ա–բ [Երեքտասաներորդ քարոզ...] ...*բայց մնաց իբրեւ սեպհական կնիք քրիստոնէի...*

*ԺԳ.* 10բ–11ա Չորեքտասաներորդ քարոզ... Վասն անօրէնութեան մերոյ... – *Որ բերկրութեան կենցաղոյս ոչ զհետ գայ տրտմութիւն...*

*ԺԴ.* 11բ–2ա Հնգետասաներորդ քարոզ. Բուն Բարեկենդան... Ընդունայն են կեանք իմ... – *Եկեղեցի սուրբ զանկումն նախահօր մերոյ նկարագրէ այսօր...*

*ԺԵ.* 12ա–3ա Վեշտասաներորդ քարոզ... Հայր թող դոցա... – *Երկնաւոր Վարդապետն մեր Յիսուս Քրիստոս երբեմն ի քարոզել իւրում...*

*ԺԶ.* 13ա–4ա Տասնեւեօթներորդ քարոզ... Երթիցուք երեքօրեայ ճանապարհ... – *Ելքն Իսրայէլի յԵգիպտոսէ նախադիծ եղեւ օրինակ...*

*ԺԷ.* 14ա–5ա Տասնեւութերորդ քարոզ... Որ գնայ անբիծ... – *Խորանն վկայութեան, որ յօրինեցաւ առ ստորոտով լերինն Սինայ...*

*ԺԸ.* 15ա–6ա Քարոզ տասնեւիններորդ... Այսօր ընդիս իցես ի դրախտի... – *Յորժամ Տէրն մեր Յիսուս աղօթէր ի վերայ խաչին...*

*ԺԹ.* 16ա–7ա Քարոզ քսաներորդ... Երթիցուք երեքօրեայ ճանապարհ – *Իսրայելացիք զորքան ժամանակ մնացին յԵգիպտոս...*

*Ի.* 17բ–8բ Քսան եւ մի քարոզ... Գործէ զարդարութիւն... – *Որ փափաքի կալ յայսմ աշխարհի, ի կաթուղիկէ եկեղեցւոյ...*

*ԻԱ.* 18բ–9բ Քսան եւ երկրորդ քարոզ... Կին դու ահա որդի քո... – *Ի տեսիլ հրաւիրեցաք եղբարք...*

*ԻԲ.* 19բ–21ա Քսան եւ երրորդ քարոզ... Երթիցուք երեքօրեայ ճանապարհ – *Երեւք աւուրբք կատարի ճանապարհ խորհրդոյ...*

*ԻԳ.* 21ա–2ա Քսան եւ չորրորդ քարոզ... Խօսի զճշմարտութիւն ի սրտի իւրում... – *Երրորդ պայման կալ արժանապէս ի զինուորեալ եկեղեցի...*

*ԻԴ.* 22բ–3ա Քարոզ [քսան] եւ հինգերորդ... Աստուած իմ, Աստուած իմ ընդէ՞ր թողեր զիս... – *Եւ ի հանգանակի քրիստոնէական ուղղափառ սուրբ հաւատոյս մերոյ...*

իե. 23բ–4բ Քարոզ քսան եւ վեցերորդ... Երթիցուք երեքօրեայ ճանապարհ – *Ուրախական է ճանապարհ որ տանի զմարդ յերջանկութիւն...*

իզ. 24բ–5բ Քարոզ քսան եւ եօթներորդ... Որ ոչ նենգաւորեաց... – *Ճշմարտութիւն եւ ստութիւն ներհականք են...*

իէ. 25բ–6բ Քարոզ քսան եւ ութերորդ... Ծար[աւ]ի եմ... – *Ըստ Շնորհալի հայրապետին մերոյ առաջին մարդն...*

իը. 26բ–7բ Քարոզ քսան եւ իններորդ... Երթիցուք երեքօրեայ ճանապարհ – *Ընթացք երեքօրեայ հոգեւոր ճանապարհորդութեան մերոյ ահա կատարեցաւ...*

իթ. 28ա–բ Քարոզ երեսներորդ... Զար ընկերի իւրում ոչ արար... – *Զչորեսին պայմանս լուայք, որովք որդի արժանաւոր լինի մարդ...*

լ. 28բ–9բ Քարոզ երեսուն եւ մի, Ծաղկազարդ... Ամենայն ինչ կատարեալ է... – *Ամսօրեայ հանդէս անուանեալ Ծաղկազարդ է...*

լա. 29բ–30բ Երեսուն եւ երկրորդ քարոզ... Հայր ի ձեռս քո աւանդեմ... – *Ցայս վայր երկնչէի ես ի մահուանէ...*

լբ. 30բ–1բ Քարոզ երեսուն եւ երրորդ... Զհաց երկնից ետ նոցա... – *Եւ որք ելիք յԵգիպտոսէ մեղաց...*

լգ. 31բ–2բ Քարոզ երեսուն եւ չորրորդ... Ցաւուր յայնմիկ սաստկացի կոծ յԵրուսաղէմ... – *Ցաւուրս նահատակութեան մարտիրոսաց ուրախանայ սուրբ եկեղեցի...*

լդ. 33ա–բ Քարոզ երեսուն եւ հինգերորդ, Զատիկ Տեառն... Մի երկնչիք դուք... – *Քրիստոս յարեաւ ի մեռելոց այսօր, մեծ աւետիք Ադամայ...*

լե. 33բ Քարոզ երեսուն եւ վեցերորդ... Որ բնակեալդ էք յաշխարհի... – *Արեգակն զգալի ի մուտս իւր խոնարհեալ...*

լզ. 34ա–բ Քարոզ երեսուն եւ եօթներորդ... Զի որպէս առաւելան չարչարանք... – *Սրբազան առաքելոյն վճիռ է բաղդատական...*

լէ. 34բ–5բ Քարոզ երեսուն եւ ութերորդ... Ուրախ լեր բերկրեալդ... – *Աւետիք սրբոյ կուսին Մարիամու անուանի այսօրեայ մեծահանդէս տօնախմբութիւն...*

լը. 35բ–6ա Երեսուն եւ իններորդ քարոզ... Եւ յետ ութ աւուր... – *Քրիստոս յարուցեալ ի մեռելոց յառաւօտու առաջին միաշաբաթին...*

լթ. 36բ–7ա Քարոզ քառասներորդ... Տէր Աստուած մեր երեւեցաւ մեզ... – *Այսօր ըստ կարգի աւուրց կիւրակէից սրբոյ Զատկի, է երրորդ կիւրակէ...*

խ. 37ա–8ա Քարոզ քառասուն եւ մի... Դու Տէր միայն առան–



ՁԵՌԱԳԻՐ Ե., ՔԱՐՈԶԳԻՐՔ



ՁԵՌԱԳԻՐ Զ., ԹԷՍՊԻՀԱԹ

ձին··· — *Զոր օրինակ զղալի աչք առ ի տեսանել զերեւելիս···*

*խա·* 38*ա*–9*ա* Քարոզ քառասուն եւ երկրորդ··· Ապա երեւեցի նշանն··· — *Այսօր մարդիկ աշխարհիս այսօրիկ նոր նշան տեսին···*

*խբ·* 39*բ*–40*ա* Քառասուն եւ երրորդ քարոզ··· Առաջի նոցա երթալ··· — *Իմաստութիւն Հօր Յիսուս երկնաւոր Վարդապետն մեր···*

*խգ·* 40*ա*–1*ա* Քառասուն եւ չորրորդ քարոզ··· Համբարձէք իշխանք··· — *Սուրբ եկեղեցի այսօր երկնաւոր փեսային իւրոյ զհամբարձումն տօնելով···*

*խդ·* 41*ա*–2*ա* Քարոզ քառասուն եւ հինգերորդ··· Ուրախ լինել եւ խնդալ պարտ էր··· — *Յառակ անառակին ուսուցանէ մեզ երկնաւոր Վարդապետն մեր···*

*խե·* 42*ա*–*բ* Քարոզ քառասուն եւ վեցերորդ, Պենտեկոստէի··· Այսօր նոր ժողովուրդք ցնծացէք··· — *Որք ի մօտոյ տեսիք զհանդէս համբարձման···*

*խզ·* 43*ա*–4*ա* Քարոզ քառասուն եւ եօթներորդ··· Կենդանի է Տէր··· — *Այսօր սուրբ եկեղեցի մայր մեր յիշատակէ զվերանալ Եղիայի···*

*խէ·* 44*ա*–*բ* Քարոզ քառասուն եւ ութերորդ··· Գիտասցես թէ որպէս պարտ իցէ քեզ··· — *Այսօր է տօն եկեղեցւոյ···*

*խը·* 45*ա*–*բ* Քառասուն եւ իններորդ քարոզ··· Մի այսուհետեւ թագաւորեսցեն մեզ··· — *Յաշխարհէ աստ եթէ ոք ի սեռս մարդկան ջանայցէ գտանել զոք առանց մեղաց···*

*խթ·* 46*ա*–*բ* Յիսներորդ քարոզ··· Լինի յետինն մարդոյն այնորիկ չար··· — *Ըստ այսօրեայ սուրբ աւետարանին պատմելոյ···*

*ծ·* 47*ա*–*բ* Քարոզ յիսուն եւ մի··· Եւ որպէս ձիթենի պտղալից··· — *Այսօր սուրբ եկեղեցի տօնախմբութիւն կատարէ ամենասուրբ Աստուածամօր···*

*ծա·* 47*բ*–8*բ* Քարոզ յիսուն եւ երկրորդ··· Վայ անօրինին··· — *Քաջայայտ է ամենեցուն որք են յաշխարհի աստ···*

*ծբ·* 48*բ*–9*բ* Քարոզ յիսուն եւ երրորդ· Վարդավառ··· Ասէին զեղից նորա··· — *Ուրախական է յոյժ հանդէս այլակերպութեան Տեառն մերոյ···*

*ծգ·* 49*բ*–50*բ* Քարոզ յիսուն եւ չորրորդ··· Զի յիմարն Աստուծոյ··· — *Հրաշալին Պօղոս զհրաշալիս ատենաբանէ···*

*ծդ·* 50*բ*–1*ա* Քարոզ յիսուն եւ հինգերորդ··· Գնոց գնեցայք··· — *Ոչ ոք յօժարի գնուաստ իր ինչ···*

*ծե·* 51*ա*–2*ա* Քարոզ յիսուն եւ վեցերորդ··· Այժմ տեսանեմ իբրեւ··· — *Ի մահկանացու կեանս յայս յորում հաւատովք գնամք···*

*ծզ·* 52*ա*–3*ա* Քարոզ յիսուն եւ եօթներորդ· Վերափոխումն

Աստուածամօր… Եւ Դաւիթ եւ ամենայն տունն Իսրայէլի… – *Ամենայն տէրունական տօնախմբութիւնք…*

ծէ. 53ա–բ Քարոզ յիսուն եւ ութերորդ… Մի է աղաւնի իմ… – *Սուրբ Եկեղեցի իննօրեայ կատարէ զտօն վերափոխման…*

ծը. 54ա–բ Քարոզ յիսուն եւ իններորդ… Եւ մայր… – *Սուրբ եկեղեցի ի շրջանս միոյ տարւոյ օր աւուր տօնախմբէ զսուրբս…*

ծթ. 55ա–բ Քարոզ վաթսուներորդ… Ցայտնեալք զի էք թուղթք Քրիստոսի… – *Ի Թուղթ իւր օրինակէ սուրբ առաքեալն ըզհաւատացեալս Քրիստոսի…*

կ. 56ա–բ Քարոզ վաթսուն եւ մի… Եւ բերին առաջի նորա խուլ մի… – *Ի ցաւակիրս առաւել ցաւալի եւ այն որ ոչ ճանաչէ…*

կա. 56բ–7բ Քարոզ վաթսուն եւ երկրորդ… Ո՞վ է սա որ երեւեալս է… – *Ծնունդ ամենասուրբ կուսին Մարիամու տօնախմբէ այսօր մայր մեր եկեղեցի…*

կբ. 57բ–8ա Քարոզ վաթսուն եւ երրորդ. Խաչվերաց… Բայց միայն զաւազան… – *Սուրբ մարգարէն Դաւիթ հոգւով տեսեալ փրկչին մերոյ…*

կգ. 58բ–9ա Քարոզ վաթսուն եւ չորրորդ… Զոր Աստուած զուգեաց… – *Հանդերձ եմ մարդկութեան կուսութիւն եւ ամուսնութիւն…*

կդ. 59բ–60ա Քարոզ վաթսուն եւ հինգերորդ… Ինձ քաւ լիցի պարծիլ… – *Ոչ սակաւ պարծանք է Հայաստան աշխարհի մեր լինիլ եղեմական դրախտին ի նմա…*

կե. 60բ–1ա Քարոզ վաթսուն եւ վեց… Պատասխանի ետուն եւ ասեն չգիտեմք… – *Երկնաւոր վարդապետն մեր Յիսուս Քրիստոս թէպէտ…*

կզ. 61ա–2ա Քարոզ վաթսուն եւ եօթներորդ… Կայր Յիսուս ընդդէմ գանձանակին… – *Առած է հասարակաց, թէ ուր հային աչք, անդ եւ հային միտք…*

կէ. 62ա–3ա Քարոզ վաթսուն եւ ութերորդ… – *Ի մկրտութեան Տեառն բացումն երկնից, էջք աղաւնոյ…*

կը. 63ա–4ա Քարոզ վաթսուն եւ իններորդ… Զի եառ խաչին… – *Թէպէտ խաչի է այսօր տօնախմբութիւն…*

կթ. 64ա–բ Քարոզ եօթանասներորդ… Շնորհք ընդ ձեզ… – *Յորժամ կամեցաւ Աստուած եւ կազմեաց զմարմին մարդոյ…*

հ. 64բ–5բ Քարոզ եօթանասուն եւ մի… Գնեցէք զժամանակն… – *Ի վաճառականութիւն յորդորէ զմեզ սուրբն Պօղոս…*

հա. 65բ–6ա Քարոզ եօթանասուն եւ երկրորդ… Նմուտ խարհուրդ… – *Յետ այլակերպութեան իւրոյ Յիսուս իբրեւ էջ ի Թաբօրական լեռնէ…*

Հբ. 66ա–բ Քարոզ ութանասուն եւ երրորդ… Ո՞վ է ի ձէնջ, որոյ իցէ բարեկամ… – *Ցայսօրեայ ընթերցուած սուրբ Աւետարանի, պատմէ սուրբ Աւետարանիչն…*

Հգ. 66բ–7բ Քարոզ ութանասուն եւ չորրորդ… Սրտացուցեր զմեզ քոյր իմ հարս… – *Ի տասնաբանեայ օրէնսն, զոր ետ Աստուած իսրայէլացւոց…*

Հդ. 67բ–8ա Քարոզ ութանասուն եւ հինգերորդ… Նոյնպէս եւ որ զանձէ անձինն… – *Երկնաւոր վարդապետն մեր Յիսուս Քրիստոս ի քարոզելն ի տեղւոջ ուրեք…*

Հե. 68բ–9ա Քարոզ ութանասուն եւ վեցերորդ… Այլ վասն եղբայրսիրութեան չէ ինչ գրել առ ձեզ… – *Սրբազան եւ առաքեալն Պօղոս յայսօրեայ ընթերցուածի իւրում…*

Հզ. 69ա Քարոզ ութանասուն եւ եօթներորդ… Այր ոմն գործեաց ընթրիս… – *Հրեշտակային վարդապետն Գրիգոր Նարեկացի, ի սկիզբն մեկնութեան Երգ Երգոցին…*

Հէ. 69բ–70բ Քարոզ ութանասուն եւ ութերորդ… Լցաք առաւօտու… – *Եկեղեցի սուրբ ամի ամի, ըստ իւրաքանչիւր աւուր պատշաճի…*

Հը. 70բ–1ա Քարոզ ութանասուն եւ իններորդ… Ո Տէր յիշեա զիս Տէր… – *Առած է հասարակաց, թէ հարք զանձեն վասն որդւոց…*

Հթ. 71ա–բ Քարոզ ութսուներորդ… Որք սպասեն Տեառն եւ որոգեսցին զօրութեամբ… – *Իսկ եթէ զսուրբ եկեղեցի ի դրախտ օրինակեսցուք…*

Ձ. 72ա–բ Քարոզ ութսուն եւ մի. Զ կիրակէ Յինանկի. ազգասիրութիւն. Ցարգեցէք զայդ մինչեւ ես եկից… – *Ի հաւատոց գիտեմք, եթէ կրկին է գալուստ Տեառն… Օրհնեսցէ եւ փայլեցուսցէ անանց եւ հոգեպարար օրհնութեամբ, այժմ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

## Զ.

## ԹԷՍՊԻՀԱԹ

(*Հայատառ քրտերէն հոգեւոր երգարան*)

*Ի դար*

Թերթ՝ 252. *դատարկ*՝ 250բ–2բ: Պրակ՝ 21×12: Նիւթ՝ *Թուղթ* (*Միադիծ՝ տետրակի*): Մեծութիւն՝ 17.5×12.5: Գրութիւն՝ *Միա–*

## ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ ՁԵՌԱԳՐԱՑ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԹԻՒԵՐՈՒ

| Ս. Թ. | Ն. Թ. | ՆԻՒԹ | ԳՐԻՉ | ԺԱՄԱՆԱԿ |
|---|---|---|---|---|
| 18 | 861ա | Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթի | — | ԺԶ–ԺԷ դդ. |
| 19 | 862բ | Աւետարան | Կոստանդին | ԺԵ–ԺԶ դդ. |
| 20 | 863գ | Աւետալան | Գր. Սեբաստացի | |
| 21 | 864դ | Մաշտոց | Սահակ | 1671 |
| 22 | 865ե | Մաշտոց | — | ԺԷ–ԺԸ դդ. |
| 23 | 866զ | Մաշտոց | — | ԺԷ° դար |
| 24 | 867է | Շարակնոց | — | 1597 |
| 25 | 868ը | Շարակնոց | Մարտիրոս Աբղ. | ԺԷ° դար |
| 26 | 869թ | Շարակնոց | Մովսէս Բհնյ. | ԺԶ° դար |
| 27 | 870ժ | Տօնացոյց եւ Ձայնաքաղ Շարական | — | 1651 |
| 28 | ՁԻՓ | Ճառընտիր | — | — |
| 29 | 872ժբ | Մեկնութիւն Յոբայ եւ Դանիէլի | Վարդան | 1577 |
| 30 | 873ժգ | Բարոզագիրք եւ պատմագիրք | — | ԺԷ° դար |
| 31 | 874ժդ | Յաղագս ազահութեան | Բարթամ Սրկ. | |
| 32 | 875ժե | Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթի | Կարապետ Իբերցի | ԺԵ–ԺԶ դդ. |
| 33 | 876ժզ | Մեկնութիւն Երկոտասան Մարգարէից | — | 1666 |
| 34 | ՁԻՓ | Քարոզագիրք | — | — |
| 35 | 877ժէ | Յաղագս մոլութեանց | Մինաս Էտիրնեցի | 1710 |
| 36 | 878ժը | Գիրք Դատաստանի, Մ. Գօշի | Մկրտիչ Դպիր | 1629 |
| | 879ժթ | Էփիմէրտէս եւ Տոմար | Մուրատ Պօղոսեան | 1830 |
| | 880ի | Ժողովածոյ | Պաղտասար | 1669 |
| | 881իա | Շարակնոց | Յակովբոս Կրօնաւոր | 1270 |
| | 882իբ | Քարոզգիրք | — | ԺԸ–ԺԹ դդ. |
| | VN85 | Թէսպիհաք | — | Ի դար |

Ս. Թ. = Սիւրմէեան Սրբ.ի թուագրում: Ն. Թ. = Նոր թուագրում:

*սեւ*։ Գիր՝ *Շեղագիր*։ Տող՝ 15/16։ Կազմ՝ *Կապոյտ Թղթակազմ*։ Պահպանակ՝ 1–*ական թերթ սկիզբը եւ վերջը*։

Վիճակ՝ *Բաւարար*։

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. 1*ա*–246*բ* Թէսպիհաթ. 121ա, 270հ ի պատաքա բաժա լահտէ – *Թապպ մա պըսըլլամա թի, Ցըհանտա բօժա լահտէ, /Մա պ'հավլա ճըվանա լվի ճի,/ Քօ չընորհք պըխօսջըն ժէ...*

(*Մատեանս կը բովանդակէ* 310 *քրտական հոգեւոր երգեր*)

2. 247*ա*–52*բ* Երգ Ներսէս Շնորհալի – *Առաւօտ լուսոյ, արեգակն արդար... քեզ երգել զվառս*։

## THE ARMENIAN MANUSCRIPTS KEPT IN THE LIBRARY OF NEAR EAST SCHOOL OF THEOLOGY

**FATHER ANOUSHAVAN TANIELIAN**

**(Summary)**

In this article the author presents six of the twenty four Armenian manuscripts, that are kept in the library of Near East School of Theology. The manuscripts presented are the following:

1. **Canticles**, scribe: Hagovbos (A. D. 1270).
2. **Collection**, scribe: Paghtassar (A. D. 1669).
3. Grigor of Tatev, **Interpretation of Psalms**, scribe: Garabet of Iber (17th century).
4. **Epimerdes (meteorological guide) and Calendar**, scribe: Unknown (19-20th century).
5. **Book of Homilies**, scribe: Unknown (20th century).
6. **Tesbihat** (Armeno-Kurdish hymn book), scribe: Unknown (20th century).

Of these six manuscripts, five are being presented here for the first time. The third, however, has been previously presented by Archbishop Artavazd Surmeyian, in his **The Catalogue of the Armenian Manuscripts in Aleppo, Antelias and Private Collections**, vol. 2, Aleppo, 1936 (manuscript no. 32), is now being presented with certain corrections.